ՃԱՊՈՆԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻՑ

Ճապոնացու բարքերը ուսումնասիրելիս, մարդ ամենից առաջ ձեռք պէտք է վերցնի եւրոպական չափից եւ մօտենայ նրանց առանց կանխակալ կարծիքների:

Ճապոնական քաղաքակրթութիւնը զարգացել է բոլորովին առանձնակի եւ դրա համար նրանց կեանքի ու հայեացքների մէջ շատ բան մեզ բոլորովին խորթ է թւում եւ նոյն իսկ յաճախ վիրաւորում է մեր բարոյականի կամ պատշաճի զգացումը:

Միեւնոյն բանը զգում է եւ ճապոնացին մեր վերաբերմամբ հէնց որ մօտիկ է շփւում եւրոպացու կեանքին: Նա էլ զարմանքով բացականչում է, որ բոլոր եւրոպացիք թարս են, անում են եւ ասում ճիշտ հակառակը, ինչ որ Ճապոնում պատշաճ ու բնական է համարւում:

Մեր ու ճապոնացու մէջ եղած տարբերութիւնը մանաւանդ շատ խիստ աչքի է ընկնում այսպէս ասած՝ քաղաքավարական ձեւերի մէջ:

Ամենամեծ հաճոյախօսութիւնը որ տղամարդը կարող է անել մի ճապոնուհու, հետեւեալ հարցն է.

«Քանի՞ տարեկան էք»:

Հագուստները հագնել ու շտկել հակասեռ հիւրերի առաջ համարւում է բոլորովին comme ilfaut. մինչդեռ կօշիկով սենեակ մտնելը բացարձակ անկրթութեան ամենամեծ նշանն է:

Նրանց համար ամենեւին անպատշաճ չի համարւում, եթէ հիւրերից մէկը ճաշի ժամանակ վերցնէ ուտելիքից մի կտոր ու դնէ իր ահագին գրպանը, որ գտնւում է լայն թեւի ցածի մասում: Հեշտ է երեւակայել, թէ այս սովորութիւնը որքան ծիծաղելի դէպքերի առիթ է տալիս, մանաւանդ եթէ իրար դէմ